

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՋ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Հաստատում եմ»

ՎՊՄԻ-ի ռեկտոր, ք.գ.դ.

\_\_\_\_\_ Խաչատրյան Գ.Կ.

“\_15\_” \_\_\_\_\_03\_\_\_\_\_ 2013թ.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

«Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ  
առևտրային կազմակերպության

ECTS հենքով կրթական ծրագրերի և մասնագիտությունների  
ուսումնական պլանների մշակման, հաստատման, մշտադիտարկման և  
գնահատման

Ընդունված է գիտխորհրդի նիստում

Արձանագրություն թիվ 11

“\_24\_” \_12\_ 2010թ.

Փոփոխված է՝ գիտխորհրդի նիստում

Արձանագրություն թիվ 2

“\_07\_” \_\_\_\_\_03\_\_\_\_\_ 2013թ.

## Ընդհանուր դրույթներ

1.1. «Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Ինստիտուտ) ECTS հենքով կրթական ծրագրերի և մասնագիտությունների ուսումնական պլանների մշակման, հաստատման, մշտադիտարկման և գնահատման ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ) մշակվել է համաձայն «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի (2005թ) հոդված 26-ի 5-րդ կետի, ՀՀ Կառավարության 2005թ դեկտեմբերի 27-ի թիվ 2307-Ն «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» որոշման Ինստիտուտի կանոնադրության և հիմնված է Ինստիտուտի, ինչպես նաև ՀՀ և այլ երկրների բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունված և կիրառվող կանոնակարգերի և կարգերի վրա:

1.2. Ուսումնական պլանը նախատեսում է.

- առարկաների ուսումնասիրման հաջորդականությունը՝ հիմնված նրանց տրամաբանական կապի վրա,
- առարկաների ռացիոնալ բաշխումը կիսամյակներում՝ ուսանողի հավասարաչափ ծանրաբեռնվածությունն ապահովելու նպատակով,
- Ինստիտուտի կադրային ներուժի և նյութատեխնիկական բազայի արդյունավետ օգտագործումը:

1.3. Ուսումնական պլանը որոշում է տվյալ մասնագիտության կամ ուղղության ուսումնական գործընթացի կառուցվածքը՝ ուսումնական առարկաների ցանկը և ծավալները, նրանց դասավանդման հաջորդականությունը, պրակտիկաների տեսակները և տևողությունը, պարապմունքների անցկացման ձևերը, գնահատման ձևերը և այլն:

1.4. Ինստիտուտում կիրառվում են պլանների հետևյալ տեսակները.

- բազային ուսումնական պլան (կրեդիտային հենքով),
- աշխատանքային ուսումնական պլան (կրեդիտային հենքով),
- ուսանողի ուսումնառության երկարաժամկետ անհատական պլան,
- ուսանողի ուսումնառության անհատական ընթացիկ պլան:

1.4.1. Բազային ուսումնական պլանը յուրաքանչյուր ֆակուլտետում ուսումնական գործընթացի կառուցվածքը որոշող հիմնական փաստաթուղթն է: Բազային ուսումնական պլանում ներկայացվում են ուսումնական գործընթացի կազմակերպման բոլոր բաղադրիչները (դասընթացները, պրակտիկաները, կուրսային, ավարտական աշխատանքները, քննությունները, ստուգաթղթերը, ինքնուրույն աշխատանքը)՝ յուրաքանչյուր բաղադրիչի համար ժամաքանակով և կրեդիտներով արտահայտված ուսանողների լսարանային և արտալսարանային բեռնվածությամբ:

1.4.2. Բազային ուսումնական պլանը կազմվում է բակալավրի կրթական ծրագրով ուսուցման առկա համակարգի համար 4 տարի, հեռակա ուսուցման համակարգի համար

5 տարի տևողությամբ, իսկ մագիստրոսի կրթական ծրագրով ուսուցման առկա համակարգի համար 2 տարի, հեռակա ուսուցման համակարգի համար 2,5 տարի տևողությամբ:

1.4.3. Աշխատանքային ուսումնական պլանը կազմվում է Ինստիտուտի ուսումնամեթոդական վարչության կողմից՝ բազային ուսումնական պլանի հիման վրա և ծառայում է տվյալ ուսումնական տարվա ուսումնական գործընթացի ձևավորման և դասախոսների աշխատանքային ծանրաբեռնվածությունը հաշվարկելու համար:

1.4.4. Աշխատանքային ուսումնական պլանում արտացոլվում են ուսանողի՝ կրթական ծրագրի յուրացմանն ուղղված գործունեության բոլոր տեսակները, դրանց համար հատկացված կրեդիտները, առարկաների տեսակները՝ ըստ բազային ուսումնական պլանի, լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամաքանակը:

1.4.5. Աշխատանքային ուսումնական պլանում բացառիկ դեպքերում, պայմանավորված ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմամբ, ռեսուրսների ճիշտ օգտագործման խնդրով, հնարավոր է ֆակուլտետների ուսումնամեթոդական խորհուրդների որոշմամբ դասընթացների ուսումնասիրման կիսամյակի տեղաշարժ (տվյալ ուսումնական տարվա կտրվածքով), ինչպես նաև դասախոսություն/սեմինար, գործնական, աբորատորլ աշխատանքների հարաբերակցության փոփոխություն:

1.4.6. Ուսանողի ուսումնառության անհատական երկարաժամկետ ուսումնական պլանը կազմվում է տվյալ մասնագիտության բազային ուսումնական պլանի հիման վրա և արտացոլում է նրա կրթական գործունեության ձևերը յուրաքանչյուր կիսամյակում՝ ուսումնական առարկաները, պրակտիկաները, կուրսային աշխատանքները, այլ բաղադրիչները:

1.4.7. Ուսանողի ուսումնառության անհատական ընթացիկ ուսումնական պլանը կազմվում է անհատական երկարաժամկետ ուսումնական պլանի հիման վրա՝ մեկ կիսամյակի կամ մեկ տարվա համար, և պարունակում է ուսանողի տվյալ ժամանակահատվածի կրթական գործունեության բոլոր բաղադրիչները (դասավանդվող առարկաներ, կուրսային աշխատանքներ, պրակտիկաներ և այլն):

## **2. Ուսումնական պլանների կառուցվածքը**

2.1. Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի բազային ուսումնական պլանները բաղկացած են հետևյալ բաժիններից.

I. Վերնագիր

II. Ուսումնական գործընթացի ժամանակացույց (տեսական ուսուցում, քննաշրջան, պրակտիկաներ, պետական որակավորում, արձակուրդներ)

III. Ուսուցման տևողությունը շաբաթներով

IV. Ուսումնական գործընթացի պլան

V. Ամառտանային որակավորման աշխատանք և (կամ) պետական քննություններ:

2.2. Վերնագրում նշվում են ինստիտուտի և ֆակուլտետի անվանումները, մասնագիտության (բաժնի) ծածկագիրը և անվանումը, շրջանավարտի որակավորումը, ուսուցման ձևը (առկա, հեռակա) և ուսման տևողությունը:

2.3. Ուսումնական գործընթացի ժամանակացույցում տարբեր խորհրդանիշներով նշվում են տեսական ուսուցման, պրակտիկաների, քննաշրջանների, ավարտական որակավորման և արձակուրդների օրացուցային օրերը և շաբաթները:

Կիսամյակում ուսումնական շաբաթների թիվը, որպես կանոն, կազմում է 20 շաբաթ: Ուսումնական գործընթացի ժամանակացույցը կազմելիս պետք է ընդունել տարվա շաբաթների թիվը հավասար 52-ի, արձակուրդներին տրամադրվող ժամանակը՝ առնվազն 7 շաբաթ, որից ձմեռային արձակուրդների համար պետք է նախատեսել 2 շաբաթից ոչ պակաս ժամանակ:

Առկա ուսուցման համակարգի բակալավրիատի բոլոր կուրսերի և մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի մեկից:

Հեռակա ուսուցման համակարգի ուսումնական տարին սկսվում է ---

Մագիստրատուրայի առաջին կուրսի ուսումնական տարվա սկիզբը որոշվում է համաձայն տվյալ ուսումնական տարվա համար մագիստրատուրային ընդունելության ժամանակավոր կարգի:

2.4. Ուսուցման տևողությունը ներկայացնելիս հաշվարկվում է ուսումնական ժամանակը շաբաթներով՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա համար՝ հաշվի առնելով տեսական դասընթացները, պրակտիկաները, քննաշրջանները, ավարտական որակավորման աշխատանքները, քննությունները և արձակուրդները:

2.5. Ուսումնական գործընթացի պլանը ներառում է բոլոր դասավանդվող առարկաները՝ բաժանված ըստ կրթամասերի (ներառյալ ընտրովի առարկաները), դրանց հատկացվող ընդհանուր ժամաքանակը (լսարանային և արտալսարանային), գիտելիքների ստուգման ձևերը, առարկային հատկացվող ECTS կրեդիտները, դասավանդման կիսամյակը, շաբաթական ժամաքանակը:

Մարմնակրթության դասաժամերին, ինչպես նաև ֆակուլտատիվ դասընթացներին, կրեդիտային միավորներ չեն հատկացվում:

2.6. Բակալավրիատի համար պարտադիր են համարվում դասընթացների հետևյալ կրթաբլոկները.

- ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացներ (ԸՀՍՏԴ),
- ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացներ (ԸՄԲԴ),
- ընդհանուր մասնագիտական դասընթացներ (ԸՄԴ),
- հատուկ մասնագիտական դասընթացներ (ՀՄԴ)
- Ընդհանուր առողջապահական առարկաներ(ԸԱ)
- Այլ բաղադրիչներ

2.7. Մագիստրատուրայի համար պարտադիր են համարվում հետևյալ կրթաբլոկները.

- ընդհանուր մասնագիտական դասընթացներ (ԸՄԱ)
- ծրագրի պարտադիր դասընթացներ (ՊԴ)
- կրթական հաստատությունների կառավարում (ԿՀԿ)
- ընդհանուր մանկավարժական առարկաներ (ԸՄԱ)
- մանկավարժական (գիտամանկավարժական) պրակտիկա (ԳՄՊ)
- գիտահետազոտական աշխատանք (ԳՀ)

2.8. Բակալավրիատի «Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացներ» (ԸՀՄՏԴ) կրթաբլոկի ընդհանուր աշխատատարությունը պետք է կազմի 29-32 կրեդիտային միավոր, որից 25-30%-ը պետք է հատկացվի կամընտրական դասընթացներին:

ԸՀՄՏԴ կրթաբլոկի պարտադիր դասընթացներից են հայոց լեզուն, գրականությունը, մասնագիտական օտար լեզուն, մարմնակրթությունը, հայոց պատմությունը, փիլիսոփայությունը: Եթե այդ դասընթացներից որևէ մեկը մաս է կազմում ընդհանուր մասնագիտական դասընթացների (ԸՄԴ), ապա դրան հատկացված կրեդիտային միավորները (ժամաքանակը) կարելի է վերաբաշխել կրթամասի այլ առարկաների վրա:

2.9. Յուրաքանչյուր մասնագիտության համար կրթամասի կամընտրական դասընթացները որոշում են ֆակուլտետները՝ համապատասխան ամբիոնների առաջարկությամբ:

2.10. Բակալավրիատի ոչ մասնագիտական բաժինների «Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական առարկաներ» (ԸՄԲԴ) կրթամասի աշխատատարությունը հումանիտար մասնագիտությունների համար 10-12 կրեդիտ է, որից 20%-ը տրվում է կամընտրական դասընթացի: Պարտադիր դասընթացներից են ինֆորմատիկան, էկոլոգիան և բնապահպանության հիմունքները, տարիքային ֆիզիոլոգիան, Քաղպաշտպանությունը և արտակարգ իրավիճակների հիմնահարցերը և այլն:

2.11. «Մասնագիտացման դասընթացներ» (ՄԴ) կրթաբլոկի պարտադիր դասընթացներից են մանկավարժությունը, հոգեբանությունը, մասնագիտությանը համապատասխանող առարկաների դասավանդման մեթոդիկան, խնդիրների լուծման պրակտիկան (եթե նախատեսված է):

**2.12. Յուրաքանչյուր կրթաբլոկում պարտադիր են բուհական բաղադրիչով սահմանված դասընթացներ, որոնց ծավալը պետք է կազմի ոչ ավելի, քան կրթաբլոկի ընդհանուր ծավալի 25%-ը (ներառյալ կամընտրական դասընթացները):**

**2.12. Յուրաքանչյուր կրթաբլոկում կամընտրական դասընթացների առկայությունը պարտադիր է (բուհական բաղադրիչի 50 %-ի սահմաններում):**

2.13. Մագիստրատուրայի «Ընդհանուր մասնագիտական դասընթացներ» կրթաբլոկի պարտադիր դասընթացներից են «Օտար լեզուն մասնագիտական ոլորտում», «Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական ոլորտում»:

2.14. Մագիստրատուրայի «Պարտադիր դասընթացներ» կրթաբլոկի դասընթացները որոշում են ֆակուլտետները՝ յուրաքանչյուր մագիստրոսական ծրագրի համար:

2.15. «Կրթական հաստատությունների կառավարում» կրթաբլոկի պարտադիր դասընթացներից է «Կրթական հաստատությունների կառավարում» դասընթացը:

2.16. Մագիստրատուրայի «Ընդհանուր մանկավարժական առարկաներ» կրթաբլոկի պարտադիր դասընթացներից են «Բարձրագույն դպրոցի մանկավարժություն և հոգեբանություն», «Հոգեբանամանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն» դասընթացները:

2.17. ***Մագիստրոսական ծրագրի յուրաքանչյուր ուսումնական կրթաբլոկի համար կամընտրական դասընթացների առկայությունը պարտադիր է (30-40%սահմաններում):***

2.18. Մագիստրոսական ծրագրի գիտահետազոտական աշխատանքի բովանդակությունը որոշում է համապատասխան ամբիոնը:

2.19. Բակալավրիատի ուսումնական և արտադրական պրակտիկաները, մագիստրատուրայի գիտամանկավարժական (մանկավարժական) և գիտահետազոտական պրակտիկաները ներկայացվում են ուսումնական պլանի համապատասխան բաժիններում՝ դրանց հատկացված շաբաթների և ժամաքանակի, ինչպես նաև տվյալ պրակտիկայի անցկացման կիսամյակի նշումով:

2.20. «Ավարտական որակավորման աշխատանք» բաժնում նշվում է բակալավրի ավարտական աշխատանքի, կամ մագիստրոսական ատենախոսության կիսամյակը, իսկ «Որակավորման քննություններ» բաժնում նշվում են քննությունների անվանումները և հանձնման ժամկետները:

2.21. Ուսումնական պլանի վերջում տեղ է հատկացվում պատասխանատու անձանց ստորագրությունների համար:

### **3. Ուսումնական պլանի կազմումը**

3.1. Ուսումնական պլանների կազմումը, առանձին բաղադրիչներին ECTS կրեդիտային միավորների հատկացումը, լսարանային և ինքնուրույն աշխատանքների ծավալի որոշումը կատարվում է համաձայն Ինստիտուտի գիտխորհրդի կողմից 18.09.2009թ. ընդունված «Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման ու հաշվառման կանոնակարգ»-ում ամրագրված դրույթների:

### **4. Ուսումնական պլանի մշակման կարգը**

4.1. Մասնագիտության կամ մասնագիտացման ուսումնական պլանը մշակվում է՝ համաձայն համապատասխան աետական կոթական չափորոշիչների. 33

որակավորումների ազգային շրջանակի մակարդակներով սահմանված ուսանողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների նկատմամբ ներկայացվող պահանջների:

4.2. Ուսումնական պլաններում ընդգրկվող դասընթացների բովանդակությունը, ծավալը, հաջորդականությունը և ուսումնառության ձևերը պետք է ապահովեն.

ա) մասնագետների հիմնարար պատրաստման գործընթացի շարունակականությունը,

բ) ընդհանուր գիտական և մասնագիտական առարկաների միասնականացումը՝ կրթության հարակից ուղղությունների համար,

գ) ուսումնական և արտադրական պրակտիկաների անցկացման ընթացքում գիտելիքների, կարողությունների և հմտությունների խորացումը և ամրագրումը:

4.3.1. Բակալավրիատի և մագիստրատուրայի բազային ուսումնական պլանների նախագծերի մշակման համար պրոռեկտորների ղեկավարությամբ ստեղծվում են հանձնախմբեր, որոնք կազմում են համապատասխան մասնագիտությունների կրթամասերին հատկացվող կրեդիտների համամասնությունները և այդ կրթաբլոկների պարտադիր առարկաներն ու նրանց անցկացման հաջորդականությունը:

4.3.2. Հանձնախմբի մշակած նախագիծը փոխանցվում է համապատասխան ֆակուլտետ՝ կրթաբլոկների բուհական բաղադրիչների և կամընտրական դասընթացների լրացման համար:

4.4. Բազային ուսումնական պլանի նախագծի մշակմանը հանձնախմբի առաջարկով կարող են մասնակցել դեկանները և թողարկող ամբիոնների վարիչները կամ առավել հմուտ ու բավարար աշխատանքային փորձ ունեցող դասախոսները՝ ամբիոնի վարիչի հանձնարարությամբ:

4.5. Բազային ուսումնական պլանների նախագծերը մշակվում են նոր ուսումնական տարվա սկզբից առնվազն մեկ տարի առաջ:

4.6. Բազային ուսումնական պլանի նախագիծը մշակելիս որպես հիմք ընդունվում է սույն Ընթացակարգի 2-րդ բաժնում շարադրված ուսումնական պլանների կառուցվածքը, ճշտվում է դասընթացների ցանկը և դրանց դասավանդման հաջորդականությունը, հաշվի են առնվում դասընթացների առանձին կրթամասերին հատկացվող ժամաքանակը, ուսանողի ուսումնական բեռնվածությունը (լսարանային, ինքնուրույն և ընդհանուր), յուրաքանչյուր առարկայի դասավանդման (դասախոսություններ, գործնական պարապմունքներ, սեմինարներ, լաբորատոր աշխատանքներ) և գիտելիքների ստուգման (ստուգարք, քննություն) ձևերը, կուրսային աշխատանքներ նախատեսող առարկաները, պրակտիկաների տեսակները՝ անցկացման կիսամյակներով և տևողությամբ, վերջնական ատեստավորման ձևերը (պետական քննություններ, մագիստրոսական ատենախոսություն) և այլն:

4.7. Ուսումնական պլանի յուրաքանչյուր բաղադրիչի աշխատատարությունը առտափառվում է ECTS կրեդիտաօին միավորներով:

4.8. Ուսումնական պլանի նախագծի առաջին տարբերակը քննարկվում է ամբիոնի ընդլայնված նիստում՝ դեկանատի, հանձնախմբի և հարակից ամբիոնների ներկայացուցիչների մասնակցությամբ: Ուսումնական պլանի նախագիծը ընդունվում է ամբիոնի աշխատակիցների ձայների 2/3-ով: Ամբիոնի նիստի որոշմամբ հաստատված նախագիծը ներկայացվում է ֆակուլտետային ուսումնամեթոդական խորհուրդ: Վերջինս պարտավոր է երկշաբաթյա ժամկետում քննարկել ներկայացված նախագիծը և տալ իր եզրակացությունը:

4.9. Նախագիծը ֆակուլտետային ուսումնամեթոդական խորհրդի եզրակացությամբ ներկայացվում է գիտխորհուրդ՝ քննարկման և հաստատման նպատակով: Քննարկման արդյունքում գիտխորհրդի կողմից ընդունված վերջնական փաստաթուղթը հաստատվում է ռեկտորի կողմից:

4.10. Հաստատված ուսումնական պլանի մեկական օրինակ պահվում է պրոռեկտորի մոտ, Ինստիտուտի ուսումնամեթոդական վարչությունում, համապատասխան դեկանատում և ամբիոններում:

## **5. Ուսանողի անհատական ուսումնական պլանի կազմման և հաստատման կարգը**

5.1. Ուսումնառության սկզբին ուսանողները ծանոթանում են Ինստիտուտի՝ կրթական տվյալ աստիճանի ( բակալավրիատ, մագիստրատուրա) տեղեկագրքում ներկայացված կրթական ծրագրի բովանդակությանը, դասավանդվող առարկաների (պարտադիր և կամընտրական) ցանկին և ակադեմիական խորհրդատուի ղեկավարությամբ երկու շաբաթվա ընթացքում կազմում են իրենց երկարաժամկետ անհատական ուսումնական պլանը՝ ուսումնառության ամբողջ ժամանակաշրջանի համար:

5.2. Անհատական ուսումնական պլանը կազմվում է ըստ Ինստիտուտում մշակված ձևաթերթի:

5.3. Անհատական ուսումնական պլանում հաջորդաբար ներկայացվում են ուսումնական գործընթացի բոլոր բաղադրիչները՝ դասընթացները, պրակտիկաները, կուրսային աշխատանքները, պետական որակավորման ձևերը (պետական քննություններ, դ բակալավրի ավարտական աշխատանք, մագիստրոսական ատենախոսություն)՝ դրանց հատկացված ժամաքանակով և ECTS կրեդիտներով: Կազմած ուսումնական պլանը ներկայացվում է ֆակուլտետի դեկանին:

5.4. Ֆակուլտետի դեկանը պարտավոր է եռօրյա ժամկետում ուսումնասիրել ուսանողի անհատական պլանը և հաստատել այն, կամ վերադարձնել լրամշակման:

Ուսանողը պարտավոր է եռօրյա ժամկետում իր ակադեմիական խորհրդատուի օգնությամբ կատարել անհրաժեշտ փոփոխություններ և լրամշակված պլանը հանձնել դեկանին՝ հաստատելու համար:

Հաստատված պլանի օրինակներից մեկը պահվում է դեկանատում, մյուսը՝ ուսանողի մոտ:



5.4. Ուսանողի ընթացիկ անհատական ուսումնական պլանը կազմվում է անհատական երկարաժամկետ պլանի հիման վրա՝ մեկ կիսամյակի կամ մեկ ուսումնական տարվա համար և պարունակում է ուսուցանման տվյալ ժամանակահատվածի(կիսամյակ, տարի) ուսումնական բեռնվածությունը՝ իր բոլոր բաղադրիչներով:

Ընթացիկ ուսումնական պլանի ձևաթերթը մշակում է Ինստիտուտը:

5.5. Ուսանողը կազմում է իր ընթացիկ պլանը ուսումնական տարվա սկզբին՝ մեկշաբաթյա ժամկետում, ակադեմիական խորհրդատուի ղեկավարությամբ:

Կազմված ուսումնական պլանը ներկայացվում է տվյալ ֆակուլտետի դեկանին՝ քննարկման և հաստատման համար:

5.6. Ֆակուլտետի դեկանը պարտավոր է եռօրյա ժամկետում ուսումնասիրել ուսանողի ընթացիկ աշխատանքային պլանը և հաստատել այն, կամ վերադարձնել լրամշակման: Ուսանողը պարտավոր է երկու օրվա ընթացքում ակադեմիական խորհրդատուի մասնակցությամբ կատարել անհրաժեշտ փոփոխություններ իր ընթացիկ ուսումնական պլանում և լրամշակված պլանը հանձնել դեկանին՝ վերջնական հաստատման համար:

5.7. Հաստատված ընթացիկ աշխատանքային պլանի մեկ օրինակը պահվում է դեկանատում, մյուսը՝ ուսանողի մոտ:

## **6. Ուսումնական պլանների մշտադիտարկման, գնահատման, վերանայման կարգը**

6.1. Ուսումնական պլանների արդիականությունը, կրթական բարձր մակարդակը և արդյունավետությունն ապահովելու նպատակով թողարկող ամբիոնները պարտավոր են իրականացնել դրանց մշտադիտարկումը, վերլուծությունը և փոփոխությունների իրականացումը:

6.2. Բակալավրիատի ուսումնական պլանները պարտադիր վերանայվում են 4 տարին մեկ, մագիստրատուրայի պլանները՝ երկու տարին մեկ անգամ:

6.3. Ուսումնական տարվա ընթացքում ամբիոնը պարտավոր է դասալսումների, առարկան պարապող դասախոսների և ուսանողների կարծիքների, պրակտիկաների անցկացման, միջանկյալ քննությունների արդյունքների վերլուծության հիման վրա նախապատրաստել առաջարկներ՝ ուսումնական պլաններում փոփոխությունների և շտկումների վերաբերյալ: Առարկան պարապող և դասալսումներ անցկացրած դասախոսները պարտավոր են իրենց կարծիքները գրավոր ներկայացնել ամբիոնի նիստի քննարկմանը:

6.4. Փոփոխությունների մասին եզրակացություն անելու նպատակով ամբիոնի նիստի որոշմամբ ստեղծվում է հանձնախումբ, որտեղ ընդգրկվում են առաջարկության հեղինակը և 2 առաջատար այլ մասնագետներ: Հանձնախումբը 10-օրյա ժամկետում ուսումնասիրում է ներկայացված առաջարկը և տալիս իր եզրակացությունը փոփոխությունների մասին:

6.5. Ամբիոնի նիստում այդ եզրակացությունը քննարկելուց և ձայների 2/3-ով ընդունվելուց հետո այն ներկայացվում է համապատասխան դեկանատ և ուսումնամեթոդական վարչություն՝ նոր ուսումնական պլաններում փոփոխություններ կատարելու նպատակով:

6.6. Ներկայացված փոփոխությունները հաշվի են առնվում ուսումնական պլանների ձևավորման փուլում: